



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Apm.

2-33262

ՏԿԱԼԻՉ-ԴՆԵՊՐՈՎՈԿՈՅՑ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ

A 7234



MR. 21243

ԽԾՀԱՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1930

Թարգմ. Խ. Ա. յին



Главлит № А—77153 Заказ № 2493 Тираж 5.000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

I

Գիշերը սլարութեց թփերն ու ծառերը։ Ճա-
նապարհի յերկու կողմերում նրանք ատամնավոր
պատեր դարձան։ Գլխի վրա միայն յերկնքի մի
խղճալի պատառն ե, մութ — գորշավուն չթի պես՝
ծածկված սպիտակ կետերով՝ աստղերով։

Դժվար ե գնալը։

Խոնավությունը զգեստիդ տակն ե անցնում,
մարմինդ ճահճային գոլորշիով տենդում եւ թփուտ-
ները քթիդ են խփում և գլուխդ մաղում ե հոգ-
նածությունից ու թմբիրից։ Ճանապարհը նեղ ե՝
իսկական շավիդ։ Այստեղ ել ճուղքերն են ճան-
կոտ թաթերի նման ճանկոտում յերեսդ և ուսերդ
ու մտրակում ազդրերիդ։

Դժվար ե գնալը, մինչդեռ պետք եւ Այդպես
մի հրաման դուրս յեկավ և այդ հրամանի մեջ
առված եր. «Բուխտայի վաշտին առաջադրում եմ
Յերկաթե դիվիդիայի 25-րդ գնդի հետ միասնա-
կան գործողություններով սրբնթաց գրոհել հա-
կառակորդի թեր վրա և թիկունքն անցնելով՝
վոչնչացնել նրան»։

Բոլորը զիտելին վոր դեպի գործ են գնում և
այդ գործում մեծ կարևորություն և զաղանիք
կա: Բայց բոլորը հոգով ու զիտակցությամբ
չընդունեցին նրան: Գոնե Վասկա Կոժուխինը
այդ յեղբակացության յեկալ՝ յերբ լսեց զորա-
մասի պետ Կրուտիկովի և կարմիր բանակային
իվանյուկի խոսակցությունը:

Իվանյուկը ասում եր.

— Ու՞ր ելի, վոչ ուտել, վոչ քնել, զազան-
ների պես զիշերները քարշ ենք գալիս:

— Ինչ ե, չգիտես... են կողմն ենք գնում...
Բուխտան ե տանում, — պատասխանեց նրան զո-
րամասի պետ Կրուտիկովը, — ենպես վոր գլուխ
չի մնա վրեքս:

Վասկան գնում եր նրանց Հկողքով: Եղ խոս-
քերը վոնց վոր դանակով տվին նրա սրտին:
Ուզեց նրանց մի վիրավորական բան ասել, բայց
լուց: Միայն նայեց նրանց կողմ, կարծես թե մի
հայացքով ուզում եր նրանց ջարդել: Կրուտիկո-
վին ել, իվանյուկին ել նա լավ զիտեր: Հեղա-
փոխությունը նրանք ընդունեցին ըստ իրենց,
ստամոքսի խաթրու: Դազանակը կարող եր միայն
նրանց ստիպել աշխատել, են ել հին բանակում
կար: Խսկ Կարմիր բանակում ամեն բան հիմնվում է
զիտակցության վրա: Բայց Կրուտիկովի և իվա-
նյուկի զիտակցությունն իրենց արտից ու հանդից

դենը չեր պնում։ Զեր գնում նրա համար, վոր
նրանց գոմ ու հանդում և ձիյեր և կովեր կային
և հետօքառասուն դեսյատինի չափ ել հող
Նրանք նայում եյին յետ իրենց կուշտ անցյալին
ու նրա մեջ իրենց համար ինչքան տաես և՝ արե
կար և լավ ուտեսաւ

Վասկան իսկույն ճիշտ հիմնավորեց նրանց
քրթմնջոցը, և ինքն իր մեջ վճռեց — «ավելորդ
չի լինի այսպիսի բողոքներին մտիկ տալը»։

Ինքը Վասկա կոժուխը, նույնպես գյուղացի
յեր։ Միայն թե նրա մտքերը իրենց գոմ ու
հանդից դուրս եյին թափվում, վոնց վոր պղնձում
բերներան լցված ապուր՝ նրանք ձգվում եյին
ինչպես թարմ հոսանք դեպի կապտավուն հեռուն։
Յեվ այդ հեռվում նրանք շատ մարդիք և շատ
քաղաքներ եյին վողողում։ Վասկային իր կյանքը
մանր ու չնշին և թույլ եր թվում, վոնց — վոր
դաշտի քամու բերանն ընկած մի փետուր։ Բայց
հենց նույն կյանքն ուրիշ ուրիշ իմաստ եր ըն-
դունում, յերբ Վասկան խորասուզվում եր այն հեռ-
վում, վորի միջով մտքերը հոսում եյին և վորի
մեջ ինչպես աղջկա ժապավենազարդ վարսափըն-
ջեր, հյուսվում եյին շատ քաղաքներ և շատ
մարդկային կյանքի խտացումներ, Նրան թվում եր,
վոր գործարանային ծխնելույզները ինչպես շպիլ
կաներ ամրացնում եյին այդ տարրինակ վար։

սապինջերը և չեյին թողնում նրանց փովել այդ
աղջկա, — կյանքի լայն ու գեղեցիկ ուսերի և
կրծքի վրա:

Գյուղում Վասկային հարգում եյին իր լրջու-
թյան և հասարակական ջիղ ունենալու համար։
Իսկ ծերունիները հենց նբանից եյին բան սովո-
րում, Վասկան աղջկերանցն ել եր դուք գալիս
Գուցե նրա համար, վոր նրա կազմվածքը
կարծես թե դարբինն եր կոփել, վոր քայլվածքը
ուղիղ եր, ծանր, վոր մազերն ասես կուբըով
եր շաղաղված և թվում եր վոր նբանց սև ողակ-
ները ահա-ահա կթափվեն շուրջը, հենց վոր
զլուխը ցնցի Հիմա յերբ նա իր նկարը տունը
ուղարկեց՝ աղջկերքը բոլորովին խելքահան յե-
ղան։ Պառակ մայրը գըում եր նբան:

«Բոլորը գալիս են ու մտիկ տալիս, իսկ Մա-
լանյան լաց ել յեղակ... Արծիվ ջանիդ մատադ,
յեկ վոր հարս ունենամ տանս»...

Յեվ ինչպես Մալանյան լաց չլիներ։
Մի անգամ չեր, յերկու անգամ չեր վոր Վաս-
կան նրա հետ դուրս եր գալիս աստղերին մտիկ
տալու։ Ենպես եր լինում, վոր նստում եյին
կեռասենու տակ գրկախառնված։ Մալանյան համ-
բուրում եր վոր տեղ վոր ուզում եր, — առանց
հարցնելու՝ չարաձճի քամու պես։ Հետո յեկ
զլուխը ուսի վրա յեր խոնարհում, չերմ վարսա-

փնջերով նրան համակռւմ, իսկ ասլա հանդարտ-
վում, վոնց-վոր ծուլ եր լինում՝ նոր խորաման-
կության համար։ Միայն մատներն եյին մեղմորեն
գանգուրները վոլորում-վոլորում և դողում վախ-
լուկ քնքուշությամբ...

Մալանյան սպասում եւ Սողում են մաշող
ըսպեներն ու ժամերը։ Քամին կեռամնու ստվերը
անձայն որորում եւ Մալանյայի սրտում սո-
ղոսկում եւ վախկոտ կասկած, խանդ, տրտմու-
թյուն և նա շշնջում եւ Վասկայի ականջին,
այլելով իր շուրթերի ջերմությամբ Վասկայի
յերեսը։

— Վասկա, իմ սիրելի, իմ անուշ։ Գուցե յես
լավ չեմ, գուցե ջերմ չեմ համբուրում քեզ։

Վասկան հավաքում եւ իրեն և կարծես վա-
խեցած՝ շտապով ասում եւ.

«Ախ չե Մալանյա. յես ուրիշ բանի մասին եյի
միտք անում։ Տեսնում ես, Մալանյա, կյանքն
արմատից փոխվում ե... Մի տեղ հիմքերը ճողն-
չում են, իսկ մյուս տեղ ամբանում են նոր հիմ-
նաքարեր... հա, նորերը։ Ամեն ինչ վերակառուց-
վում ե, հասկանում ես, ընդհանուր գործում
ամեն մեկն իր տեղն ունի... իսկ... մենք... յես...
դու հասկանո՞ւմ ես...»

— Չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել, —
շշնջում ե Մալանյան՝ մտախոհ...

— Դե, գուցե ենպես, չեմ յես... Ասենք մի
հարցնի... Ավելի լավ ե եսպես:

Յեվ նորից խոնարհում ե զլուխը, նատում ան-
շարժ: Միայն մատներն են ջաձկորեն մազերը
վոլորում: Իսկ Մալանյան հառաջում ե, ավելի մոտ
ե հակվում դեպի նա, և վոնց վոր հանդարտ-
վող քամի՝ փաղաքշում ե նրա գանգուրների սև
ողակները:

Ելինչպես լաց չլիներ Միլանյան: Իսկ մի գուցե՝
վոչ միայն նա...

Վասկան գնում եր և ականջ դնում, բայց վոչ
Կրուտիկովը, վոչ Իվանյուկը խոսակցությունը չշա-
րունակեցին և զորամասում վոչ վոք չպատաս-
խանեց: Իվանյուկը ինչ-վոր փնթփնթում եր քթի
տակ, չեր հասկացվում՝ ուշունց ե տալիս, թե ինչ:
Բայց մըթմըթոց յեղավ և դրա համար ել Վասկա-
յին հասկանալի դարձավ, վոր Իվանյուկը վաշտում
աչքի յեր ընկնում նրանով, վոր շատ ուտում եր,
շատ քնում և դժգոհությամբ եր կատարում ամեն
մի աշխատանք: Վասկան նրան գոհ յերբեք չեր
տեսել, հաջորդ բոպեյին Վասկան մտածեց Բուխ-
տայի, — վաշտի հրամանատարի մասին: Զգիտես
թե ինչու, նա ցանկացավ մի ակնթարթ նրան
դնել Իվանյուկի և Կրուտիկովի կողքին, վորպեսզի
ավելի վառ կերպով նրա գիտակցության և զգաց-
մունքների մեջ տպավորվի այն տարբերությունը,

վորը կար նրանց միջև Բուխտան Վասկային
թվում եր մեծ և նույնիսկ անհասանելի մարդ:
Վասկան շատերի պատմածներից զիտեր, վոր
Բուխտան հանքահորերից ե, վոր նա մեծ քաջա-
քագործություններ ե կատարել, վոր կրծքի
յերկու կլոր շքանշանները նրան տրված ե
հենց՝ իրա՝ Լենինի կողմից: Վասկան զիտեր
նույնպես, վոր Բուխտան անյերկյուղ ե, վոր
նա մշտական աշխատանքի մեջ և և միշտ իր
տեղում: Վասկան չեր իմանում, թե Բուխտան
յերբ ե քնում: Վորպեսզի այդ հարցն իրեն հա-
մար վճռի, նա մտածեց, վոր բուխտան յերկի
իսկի յել չի քնում: Վասկայի յերեակայության
մեջ, չզիտես թե ինչու Բուխտան շոգեմեքենայի
պատկեր եր հարուցում: Յերբ մանուկ հասակում
նա դեռ կով եր արածացնում, ասես նրան քա-
շում եյին յերկաթուղային գծերը, մեքենան նա-
յելու համար, դեռ հեռվից նա նկատում եր մթնա-
վուն ծուխը և թափով նետվում եր դեպի թումբը:
Ինչ-վոր տարորինակ զգացմունքներ մղում եյին
նրան, ավելի մոտենալ և Վասկան գծերից յեր-
կու քայլ հեռավորության վրա յեր կանգնում:
Վառվող հայացքով նա կլանում եր թռչող շո-
գեմեքենայի պողպատեղեն ուժը և չեր կարող
թագինել իր հիացմունքը: Նրա փոքրիկ ուսերը
ցնցվում եյին, չնչառությունը այրող եր դառ-

նում, և սիրտը արագ-արագ խփում եր, կարծես
ուղում եր ըմբռնել մեքենայական մղիչների
ծանր չափը: Ահա բարձրագոչ, խլացուցիչ սուլոց,
կովը թոթվելով գլուխը, վայրի կենդանական
անմտությամբ, նետվում ե մի կողմ և կոխոտում
հասած գարին: Միայն գլուխն ու յեղջուրներն
են շեկ, ալիքաձև մակերեսից յերեւմ: Իսկ Վաս-
կան կարծես հմայված, կանգնած ե անխոս և
վորսում ե հրեշի մոտենալու ամեն մի ակըն-
թարթը: Յեզս մի վարկյան, ու շոգեմեքենան
անցավ մոտից: Քամու ծանր ալիքն ընկնում ե
վասկայի վրա, լցնելով նրա աչքերը ամբողջ մի
բուռ ավագ և փոշի: Մշուշը կուրացնում ե նրան.
Վասկան սրբում ե ղեմքը, մաքրում ե ավաղն
ու թափված արցունքերը և յերբ նորից բաց ե
անում բորբոքված կոպերը, շոգեմեքենան արգեն
հեռու յեւ նա համարյա թե չի յերեւմ: Նրա
պոչը սողում ե տափաստանային հեռվում՝ ուր-
վականի պես:

Այդիսի շոգեմեքենական հզորություն, նրան
թվում եր թե հիշեցնում ե Բուխտային: Կայա-
բանից կայարան նա ճիշտ ճանապարհ եր բաց
անում, կենարոնացնելով մարդկային ջանքերը:
Բոլոր վագոնները՝ կարմիր բանակայինները ան-
խուսափելիորեն գնում են նրա յետեից, կարծես
ամրացած են նրա հետ անտեսանելի, յերկաթյա

շղթայով։ Վայ կտրվողներին կամ գծից դուրս
նետվողներին։ Նրանք կտրորվեն, կփշվեն և
վար կթռչեն բարձր թմբի զարիվայրով։

— Հարկավոր ե խակական և ամուր վագոն
լինել, — վճռում ե նա, — և այն ժամանակ ամբողջ
գնացքը կուտանա մինչև նպատակը — կայարանը։

Վասկան անասելի հավատով լցված դեպի
Բուխտան և դեպի իր հրամանատարը, վաշտի
բոլոր ավըռումներին արդարացում եր գտնում։

«Նա հզոր ե... Մերն ե. նա մեզ կհասցնի
ուր վոր պետք ե»։

Բայց հենց դրանումն ել նա գտնում եր զո-
րամասի պետ Կրուտիկովի և Խվանյուկի հանցա-
գործությունն ու անհիմն տրտունջը։

II

Յերբ արդեն քսան կիլոմետր անցել եյին,
լուսաբացը նշմարվեց։ Առջեռում գծագրվեցին մար-
դագետիները խաչաձև ձգված ճանապարհներով։
Դրանցից մեկով անցնում եր վաշտը, խսկ մյուսը
գնում եր մի կողմ՝ դեպի սոսիների անտառը։
Այդաեղ վաշտը կանգ առավ։ Մի կողմում Բուխ-
տան հրամանատարներին կիսաձայն ինչ վոր բան
եր ասում։ Յերբ նա վերջացրեց դասակալետ
նազարչենկոն մոտեցավ Կրուտիկովին և ասաց։

— Կրուտիկով, ահա քեզ առաջադրություն։
Հավաքիր ըստ զորամասը և գնդացիրն առած

գնա ես ճանապարհով։ Ենտեղ տաս վերստի վրա
դյուդ կա։ Ճամբի մի կողքում անտառ և և
ճահիճ, Ինչքան կարելի յե արագ գնա, մինչե
կհասնես դյուդի առջեի պուրակը։ Հետախուզիր
այնտեղ։ Յեթե սպիտակները կառաջանան այդ ճա-
նապարհով, նրանց առաջ փակիր մինչեւ ժամը
10-ը։ Մեռիր և բաց մի թողիր, թե չե ամբողջ
վաշտը կկործանես։ Հասկացար։ Դրանից հետո
կմիանաս մեզ։

— Հասկացա, — թմրած պատասխանեց կրու-
տիկովը։

— Ուղեսորիր հենց հիմա։ Մի մոռանա, վոր
քեզ վրա ամենապատասխանատու խնդիրն և
դրվում։ Ի միջի այլոց՝ հայտնեմ քեզ... — այստեղ
դասակապետը թեքվեց և նրա ականջին շշուկով
ասաց։ — Մենք ամբողջ վաշտով գնում ենք ան-
տառը, հարավից նրանց շրջապատելու, — և բարձր
ավելացրեց — մտիկ տնւը հա։

Վասկան մոտիկ եր կանգնած և ամեն ինչ
լսեց։ Դասակապետը հեռացավ։

Կրուտիկովը կարծես թե կծկվեց և անվճռա-
կանորեն կանչեց,

— Ի՞նչպես. բոլորը այստեղ են թե չե։

Նրան պատասխանեցին, իսկ իվանյուկը
քըթնջոցով մերահիշոց տվեց։ Կրուտիկովը ասաց։
— Քաշ տվեք գնդացիրը։ Դե... գնանք,

Զորամասը պոկվեց վաշտից։ Կրուտիկովը ինչ
վոր անհամարձակ շփոթված, դողում եր, խոսում
եր ընկած ձայնով։ Այդ պատճառով, թե մի
գուցե ուրիշ պատճառով զորամասն իր հետ տա-
րավ ճնշված տրամադրություն։ Մի ինչ վոր թագ-
նված յերկյուղի Վասկան իսկույն, չգիտես թե
ինչու, մտածեց վոր դասակապետը սխալվեց այդ-
պիսի մի կարևոր գործի համար Կրուտիկովին
ընտրելով։ Նա ուղում եր արդեն բաժանվել և
գեկուցել դասակապետին իր կասկածների մասին,
բայց հանկարծ վորաեղից-վորտեղ ուղիղ զորա-
մասի առաջ հայտնվեց Բուխտան։ Ինչպես լարը
մկրատով՝ նա խոսքը կտրեց, նայելով բոլո-
րին ինչ-վոր միանդամից, «Տղերք, մտիկ տվեք,
հա», և ճիշտ այնպես արագ անհետացալ ինչ-
պես վոր յերկացել եր։

Վասկան մտիկ տվեց վաշտին և հանկարծ հայտըն-
ված Բուխտային՝ և անսպասելի կերպով զգաց
իր հոգում նույն զգացումը, ինչվոր նա ունեցել
եր սուրացող շոգեգնացքից հետո։ Նրա կոկորդը
կարծես թե բռնվեց և մարդագետինը թվաց
ավելի խավար։ Արագորեն արձակելով շինելի
ոձիքը, նա հաստատ առաջ շարժվեց։

Զորամասը ձգվեց դեպի անտառը։ Նորից յերկու
կողմում ծառերի ատամնավոր պատը։ Նրանից
դենը վոչինչ չեր կարելի նկատել, Դա ել ավելի

ծանրացրեց կարմիր բանակայինների ընդհանուր
տրամադրությունը։ Խսկույն շարժումն ինքն իրեն
դանդաղեց, կրուտիկովը գնում եր կուացած, շուրջը
մտիկ տալով, կարծես սպասելով վոր ահա նրա
վրա ամեն կողմից կզուան «խփիր», վոչ հետա-
խույզներ և վոչ եւ ուրիշ տեսակի իրական պահ-
պանության միջոցներ նա ձեռք չառավի Վասկան
տեսավ այս բոլորը, տեսավ նույնպես, վոր ինչ-
քան ավելի յեն գնում, այնքան ավելի յե կրու-
տիկովը դանդաղացնում իր քայլերը, այնքան
ավելի հաճախ և նա կանգ առնում, յերկար լուս
ե, վերջապես ասում, «կարելի յե», և նորից առաջ
անցնում։ Վասկային այդ սկսեց չարացնել։ Մի
անգամ նա ուզեց ուղղակի կրուտիկովի յերեսին
ասել, վոր նա կամ վախկոտ ե, կամ չի ուզում
իրագործել հրամանը։ Բայց նա զսպեց իրեն և
դիտելով առաջ գնաց, ժամանակն անցնում եր։
Առջեռում ինչպես այն անգամին վաշտի առաջ
գծագրվեցին մարգագետինները։ Դրեթե բոլո-
վին լուսացավ և գեմի մարգագետում կարելի յեր
նշմարել սև ըիծ։ Յերբ տասնյակը հասավ այն-
տեղ, Վասկան բարձրաձայն վորոշեց վոր այստեղ
քիչ առաջ ինչ-վոր մեկը յեղել ե, քանի վոր
խարույկը բավական թարմ եր և խոտը դեռ չեր
բարձրացրել։ Նման փաստի յերեան գալը խու-
ճապի մատնեց կրուտիկովին, նա անվճռուականու-

թյան մեջ եր հետագա առաջանալու վերաբեր-
յալ իվանյուկը նկատելով այդ, իսկույն առաջար-
կեց մնալ մարզագետնում և սպասել այստեղ մինչև
ժամի 10-ը, իսկ այն ժամանակ վերադառնալ
յուրայինների մոտ Կրուտիկովը հայտնեց, վոր
իսկապես լավ կլինի մնալ այստեղ:

— Կարծես թե տասնեհինգ մարդ կարող ե
նրանց դեմք բռնել. իսկ մի գուցե նրանք այն-
տեղ անհաշիվ են, — ասաց նա:

Վասկան զզաց թե ինչպես Կրուտիկովն առա-
ջադրությունը կատարելուց խուսափում ե: Նա
նայեց կարմիր բանակայիններին, բայց տրա-
մադրությունների ծանրությունը և յերկյուղը
չափազանց ակնահայտ եր, Վորպեսզի վորեն
ձեռվ Կրուտիկովի սխալը ուղղի, Վասկան առա-
ջարկեց:

— Ընկեր պետ, թույլ տվեք ինձ մինչև գյուղը
հետախուզել: Առանց բան ու գործի տխուր ե, —
և ծիծաղեց խորամանկ ձեռվ: Բայց նրա խորա-
մանկությունը վոչ վոք չհասկացավ: այլ միան-
գամից բոլորը կարծես թե ուրախացան:

Կրուտիկովը հավանություն տվեց առաջարկու-
թյանը և այն ժամանակ Վասկան հայտարարեց.

— Ո՞վ ինձ հետ կցանկանա գալ:

Վասկայի կանչին արձագանքեցին ութ մարդիկ:
Կրուտիկովը թույլ տվեց միայն յերկուսին գնալ, —

Վասկային և Գորնով Մատվեյին, Վասկան գոհ եր,
վոր իր հետ գալիս եւ Մատվեյը, վորին նա զի-
տեր վորպես լավ ընկեր, վորն ընկերոջը դժվարու-
թյան մեջ չի թողնի և իր գործն ազնիվ կերպով ե
կատարում։ Զննելով զենքերն յերկու ընկերները
իրար նայեցին, Վասկան ժպտաց նրան սիրալիր
կերպով։

— Քայլենք, Մատվեյ, — և դառնալով պե-
տին ասաց.

— Այնուամենայնիով Կրուտիկով, թե վոր
Բուխտան կիմանա...

Կրուտկովը թույլ չտվեց նրան վերջացնել.

— Եստեղ յես եմ հրամանատարը,

Վասկան և ընկերը գնացին։

III

Կրուտիկովը միտք եր անում և նրա մտքերը
բոլոր մնացածները կարդում եյին։ Առաջաղրու-
թյան կատարումը արդեն մնաց հետին պլանում։
Կրուտիկովը մտորում եր միայն այն մասին, թե
վոնց անի վոր դասակարետը և մանավանդ Բուխ-
տան շիմանան վոր նա ըստ եյության հրամանը
չի իրագործել։ Յերջանկություն կլինի յեթե սպի-
տակը չգա, իսկ յեթե գա։ Ախր պատերազմում
յերջանկությունը այնպես սակավ ելինում։ Բայց
ժամանակը անցնում եր, արդեն ժամը վեցն եր։

Մի ժամկց ավելի յեր ինչ վասկան ու Մատվեյը
գնացին: Վոչինչ չեր լսվում: Յեվ կրուտկովին
ամեն ինչ չափազանց պարզ և հասկանալի թվաց:
Յեվ իսկապես, մինչև անգամ թռչուններն ելին
յերգում: Իսկի պատերազմի նման չեր: Ի՞նչ սպի-
տակներ, ինչ բանո Յեվ կրուտիկովը սկսեց նիր-
հել, մանավանդ վոր Իվանյուկը հենց մի գլուխ
խումբացնում եր: Զկամենալով մաքառել նիրհի
դեմ կրուտիկովը կարմիր բանակայիններից մեկին
ասաց:

— Լավ կլինի դու մտիկ տաս, իսկ մենք մի-
քուն առնենք. մի բան կլինի թե չե՝ ար-
թնացրու, — այս խոսքերով նա քնեց փորի վրա
և նրա խոնփոցը ձուլվեց Իվանյուկի խոնփոցին:
Շուտով ողակը քնեց: Զքնեց միայն այն կարմիր
բանակայինը, վորը նշանակվել եր հերթապահու-
թյանը: Նա կարծես թե վորսում եր ինչ-վոր
հեռվում թագնված անտառի սարսափելի գաղտ-
նիքները: Մենակ մնալով, նա առանձնապես պա-
հանջ զգաց մասսայում լինել: Նրան թվում եր,
վոր ինչ վոր մեկը դիտում ե իրեն, վոր այդ
ինչ վոր մեկը, շուտով կվճռի և վեր կլենա վոր-
պես անհաղթելի ճակատագիր:

Կարմիր բանակայինը մի քանի անգամ ուզեց
զարթնեցնել տղերանց, բայց միշտ թողնում եր
ելի մի ըոսկեյով... Զափազանց առատ, հարազատ

և մոտիկ բնություն եր նրա շուրջը, չափազանց
մեղմիկ եր առավոտը և արել փաղաքշող, Ել ինչ
գաղտնիքներ։ Վոր ջհաննամից կարող ե սպիտակը
յերեալ։ Անտառ ե և անտառ, առջևումն ել Վաս-
կանու Մատվեյը։

Հոպերը հոգնեցին նայելուց, ուզում եր զլուխը
հենել ինչվոր բանի։ Այն ժամանակ, կտրմիր-
բանակայինը պառկեց և զլուխը դրեց արմունկին։
Մեղմորեն լողում եր մարգագետինը։ Անտառը
վոնց վոր ել ավելի մոտեցավ։ Վերջապես նա
բոլորովին իր զլխի վերև փակվեց։ Պարզ ե վոր
վոչ վոք չի տեսնի։ Ի՞նչ լավ ե այստեղ, խավարի
մեջ, անտառային թավատում։

VI

Վասկան և Մատվեյը հեռացան յերեք կիլո-
մետր։ Արդեն առջևում բացատը նշմարվում եր։
Վասկան շտապում եր, իսկ շտապելու կարիքը
կար։ Ահա վերջին ծառերը։ Ահա լույս իսկ լույսի
մեջ... ինչ ե այդ... Մի ակնթարթում Վասկան և
Մատվեյը ընկղմվեցին ճանապարհի կողքի թփուտ-
ներում։ Նրանց մոտից անցավ հեծելազորի մի
դասմակ, մոտ տաս մարդուց սպայի զլխավորու-
թյամբ։

— Պառկիր եստեղ, իսկ յես ենտեղից նա-
յեմ գյուղին։

Նա արագ թփերի մեջ սուզվեց։ Շուտով նրա
առաջ բացվեց հարթություն, մաքուր առանց
թփիկների, ափի նման։ Հեռվում գյուղակն եր
յերեսում, զինվորական խոհանոցները ծխում ելին։
Շուրջը թամբած ձիյեր ելին։ Զինվորները յետ ու
առաջ ելին գնում։ Խոհանոցների և ձիյերի թփից
վասկան արագ վորոշեց «գնդից վոչ պակաս» և
վերջին անգամ հայելով՝ ավելացրեց։ «Այ, եստեղ
պիտի գնդացիր լիներ», Նորից թփերի մեջ սուզ-
վեց։ Ճանապարհի կողքով նա Մատվեյի հետ
ինչքան ուժ ուներ վազում եր։ «Կհասնեմ. չե.
չեմ հասնի, կգրավեն գնդացիրը, բոլորին կմոր-
թեն», մտածում եր Վասկան և վազում ավելի ուժ-
զին։ Մատվեյը հարիվ հասնում եր նրա յետելից։

— Իմ նշանի համաձայն կանես ամեն ինչ։
Գնդացիրը հարկավոր ե խլել, — նետեց նա առաջ
սուրալով։

Հանկարծ՝ կրակոց. — մեկ, յերկու. Յերկու
կրակոցն ել դասակի կողմիցն եր։ Վասկան գիտեր,
վոր այնտեղ մեծ դժբաղատություն ե կատար-
վում և զրա համար ել ավելի ուժգին վազեց։
Նա մտածում եր, վոր դեռ կարելի յե կրուտի-
կովի սխալը ուղղել։ Միայն թե գնդացիր լիներ։
Հենց միայն այն միտքը, վոր գնդացիրը սպիտակ-
ները խլել են, — արյունը խփում եր գլխին։ Նրա
մեջ ծնեց ինչ վոր անընկճելի հանդգնություն

և չարությունն հաղիվ կարողացավ նա ժամանակին իր կատաղի վազքը կանդնեցնել, յերբ բացվեց մարդագետինը և իրեն շատ մոտ՝ հնչեցին խորքեր.

— Ե՞ս ի՞նչ եյիք մտադիր անել դուք ձեր ողակով:

Վասկան բացեց թփերը՝ Սպան հարցաքննում եր կրուտիկովինս կրուտիկովը ճիշտ կըկնեց այն առաջադրությունը, վորը տվեց դասակապետը: Վասկայի սիրտը խփեց, կարծես ուզում եր դուքս թռչել: Արյունը յերեսին տվեց: Զեռները սեղմեցին հրացանը, բայց նա իրեն զսպեց:

— Իսկ Բուխտան, — նորից հարցրեց սպան: Կրուտկովը տվեց վաշտի ճշգրիտ առաջադրությունը: Յերբ սպան գլուխը որորեց, կրուտիկովը կարմիր բանակայինների վկայությանը դիմեց: Նրանք յոթն եյին: Չորսը պառկել եյին հեռվում, սպանված և կտրտված: Կարմիր բանակայինները լռել եյին, իսկ իվանյուկը հանդուգնավելացրեց.—

— Ճիշտ ե: Յես ինքս լսեցի: Հարավային կողմից այս անտառը պիտի պաշարեյին:

— Շատ ուժեր ունի:

— Հինգհարյուր հետևակ զինվոր, — պատասխանեց կրուտիկովը:

Իվանյուկը ուղղեց:

— Զհաշված մեր ողակը:

— Հըմ՝ լանի... Կոմունիստներ շատ կամ
ձեր մեջ,

Կոմունիստ և Խվանյուկ իրար վրա տալով
պատասխանեցին.

— Վաշտում շատերը կան, ինքը Բուխտան
կոմունիստ եւ Մենք ինքներս կոմունիստներին
դեմ ենք: Վաղուց ձեր կողմն անցած կլինելինք,
թե վոր...

Կարմիր բանակայինները զարմացած աչքերը
չուցին իրենց հրմանատարի և Խվանյուկի վրա:

— Դե լավ տարեք դրանց, — դիմեց սպան
ավագ հեծելազորայինին.

— Իսկ յես շտապում եմ, տաք ժամանակ-
ներն են. յեթե մեկն ու մեկը մտածի...

— Անձնատուր, սպիտակ սրիկա...

Վասկան և Մատվեյը դուրս թռան թվերից:
Հարձակման պատրանքը միանգամյան հաջողվեց:
Սպիտակները միանգամյից ուշքի չեկան, իսկ յերբ
իրենց հավաքեցին՝ արդեն նրանցից վեցը ընկել
ելին սպանված: Յերեքը հապճեպով նետեցին
իրենց հրացանները: Յոթերրորդը ձեռք գցեց
ատրճանակը և Վասկայի վրա ուղղեց: Վաս-
կան թափանարեց հրացանի կոթով: Սպանված
սպայի ահաբեկված ձին վստանեց մի կողմ, և
վոտքով դիպավ Վասկայի կողքին: Նա կորցրեց
հավասարակշռությունը և այն ժամանակ յոթեր-

ըորդի կրակոցը թնդաց... Կարմիր բանակային
Ստեղկան, նույն ակնթարթում ձեռք զցելով
հրացանը՝ յոթերորդին բարձրացրեց սվինի վրա:
Շուտով ամենքն արդեն սպառագինված եին,
Կրուտիկովից և Խվանյուկից բացի:

Միայն մի ակնթարթ խավարն ասես թե սքո-
ղեց Վասկայի հայացքը: Արագորեն զիտակցելով
ըոպեյի լրջությունը, նա յուրայիներին գոռաց.
— Զիյերն առեք:

Յեվ ինքը վերցրեց ոպայի ձիու սանձը:

— Քաշ տվեք գնդացիրն եստեղ, — ինձ մստ:

Շուտով գնդացիրը ձիու վրա յեր և Վասկան
տեղավորեց այն իր գողում:

— Մատվեյ, — գոռաց նա հրամայաբար:

Այդ ըոպեյին կրուտիկովն իրեն հավաքեց, և
հենվելով հենց նոր վերցրած հրացանին՝ ասաց.

— Յես եմ այստեղ հրամանատարը, կոժուխին:

Վասկան նայեց նրա վրա վոչնչացնող մի հա-
յացքով և գոռաց ցասումով.—

— Լոիր, կեղտոտ դավաճան: Գցիր հրացանը:
Մատվեյ, զրան և Խվանյուկին դիր այն յերեք
գերիների շարքում: Քշիր նրանց մեր յետեից,
ենտեղ Բուխտայի հետ կմիանանք: Լավ մտիկ
տուր, հենց վոր մի փորձ անեն փախչելու՝ տեղն
ու տեղը...— Յեվ դառնալով յուրայիններին հրա-
մայեց.

— Իմ հետեւից ընկերներ, շուտու
նրա ձին արշավեց և մի քանի վոստյունով
կտրեց վողջ մարզագետինը, նրա յետելից սու-
բացին մյուսները:

Կրուտիկով Վասկայի վոչչացնող խոսքերի
վրա, հրացանը բաց թողեց. զենքը ընկավ սպան-
ված սպայի կրծքին:

Մատվեյը հրամայեց.

— Բոլոր գերիները մի շարք կանգնեն:

Յերեք սպիտակներ կանգնեցին:

— Ինչի յեք դանդաղում, կրուտիկով, իվա-
նյուկ, — ինչպես ասված՝ ե կզնդակահարեմ, — և
նա ձեռքը հրացանի բլթակին տարավ:

Յերկուսը, թե կրուտիկովը և թե իվանյուկը պա-
զատալից հայացքը բարձրացը դեպի Մատվեյը,
ճգնելով նրա մեջ գտնել իրենց քիչ առաջվա-
ընկերոջը, բայց նրա հայացքը սառն ու անթա-
փանց եր, իսկ աշքերում վառվում եյին ատելու-
թյան կրակները: Կրուտիկովը և իվանյուկը շտա-
պով հրամանը իրագործեցին:

— Հետ-դարձ, — հրամայեց Մատվեյը: Յեթե
մեկը առանց թույլտվության շրջվի, — տեղն
ու տեղը կպառկի, — զոռաց Մատվեյը ապա թեք-
վեց սպայի վրա:

Հանելով նրա գրպանից բոլոր թղթերը, արձա-
կելով ատրճանակն ու թուրը նա հեծավ ձին,

Ասրճանակի վողը նրանց վրա ուղղելով հրամայեց.

— Քայլերով առաջ, մարշ, Դնալ առանց դեսդեն նայելու, թե չե...

Անտառում նորից իջած լուսվյան մեջ լսելի յեր հինգ մարդու վախկոտ և անհաստատ քայլերի ձայնը, նրանցից յերեքը զերված սպիտակներ, իսկ յերկուսը նախկին կարմիրներ ելին: Այդ քայլերին հյուսվում եր Մատվեյի ձիուսմբակների դոփյունը:

V

Դեռ իր արշավի միջոցին՝ Վասկան պուրակի լույսերում ճանապարհի վրա շարժում նկատեց: «Զենք հասնի, — անցավ նրա մտքով և սիրտը դրանով լցվեց: Յեթե ժամանակին չհասնես և դրավեն պուրակը, ել ի՞նչ պիտի անես: Այստեղ անտառում նրանց առաջը չես առնի, քանի վորտաս քայլի վրա անգամ հրաձգություն չիլինի. — հարկավոր ե հասնել. — վճռեց նա և ել ավելի թափով քշեց ձին: Մինչև բացատը մնաց քսան քայլ: Վասկան ցատկեց գետին: Դնդացիրը զրկած, նա ճանապարհի կողքով ոլացավ, թողնելով մենակ իր ձին: Նրակարմիր բանակայինները մնացին ուրվոր, — յետենում: Յերբ Վասկան ճանապարհի կողքով դուրս յեկավ պուրակը, նրա աչքերի առաջ բացվեց հետեյալը:

Սպիտակների զորասույնը գյուղի առաջ շար-
վում եր, անտառին մոտենում եր մի վաշտ,
յերեսուն մարդուց՝ ինչպես յերեսում ե պահա-
կախմբի մի մասը։ Մի քանի ըոպեցից նրանք
անտառը կծփեն։ Վասկան տենդային արագու-
թյամբ կարգի յեր բերում գնդացիրը։ Թուփին իր
սաղարթով ծածկում եր նրան, և դա թույլ եր
տալիս գոնե մի ըոպեցաչափ անտես մնալու
հույս ունենալ։ «Կարողանամ գոնե Մաքսիմը
սարքի բերել», այդ միտքն եր նրա մեջ նստել
և նա ձեռքով արագորեն ժապավենն եր ուղղում։
Վասկան նույնիսկ չնկատեց, վոր արյունը հո-
սում եր վերնազգեստից, կաթում գնդացիրին։
Նա շտապում եր։ Յեվ յերբ սպիտակների վաշտի
կեսը ձգվեց անտառամեջ՝ նա աչքերը նշանակետի
կտրվածքից հառեց նրանց վրա։ Հատիկը վոս-
տոստեց ինչպես կաթիլ ջուրը ջեռուն կասկա-
րայի վրա։

— Այ յես քո... թքած, և վասկան սեղմեց
սղնակը։

— Տրատահատա!

Կրակն ընկավ հենց ուղիղ զորասյունի մեջ։
Լիակատար անսպասելիությունը և գուցե կրակի
պատահական դիպուկությունը առաջ բերեց խսկա-
կան խուճապ։ Վոստոստելով վիրավորների և
սպանվածների դիակների վրայով սպիտակները

խելագարների պես փախան դեպի գյուղը: «Հեծելագներ, հեծելագներ», — զոռաց ինչ վոր մեկը և իսկապես՝ ճիշտ այդ ժամանակ պուրակից դուրս թռան փրփրակալած և մոլեգնած ձիերի վրա Վասկայի կարմիրբանակայինների խումբը:

— Կանգնել, — կարծես իր խոսքի վորոտով շանթահարեց նրանց Վասկան: Տղերքը զսպեցին ձիերին: Վասկան հրաման տվեց:

— Գրողը ձեզ տանի, չերեալ: Ձիերը քաշեք անտառը և հրացանը պատրաստ... Գրավեցեք պուրակը: Ժապավեն ինձ ժապավեն, Վերջին խոսքերին՝ Վասկան փախչողների վրա յերկու հերթով կրակեց, իսկ գյուղից դուրս գտնված զորասյունների վրա թռուցիկ կրակ թափեց: Յեռեսուն մարդուց գյուղը հասան յերեքը: Վասկան դադարեց կրակել:

Այդտեղ նա նկատեց, վոր գնդացիրը կարծես նորից ներկվել եւ: Կանաչավուն գույնը կարմրի յեր փոխվել: Հետո նա նկատեց վոր արյունը ծնկներով վերնազգեստից ծորում ե, վոր մատները մածուցիք են: «Հրաշալի յե» — մտածեց նա: Հրաշալի յեր նրա համար, վոր չեր իմանում թե վորտեղից ե հոսում արյունը: Իսկ զլուխը արդեն մաղում եր և աչքերը վարդագույն մշուշով եր ծածկվում: Հավանաբար վիրավորված եմ, — անցավ նրա մտքով, իսկ դրան հետեւց մի

ուրիշ, ավելի սպառնալից միտք. — «Ժամանակը, մինչև ժամը 10-ը հարկավոր ե անտառի մուտքի մոտ դիմանալ. բայց ով կասի թե վոր ժամն ե: Վասկան գոռաց տղերանցը:

— Տղերք, ժամը, իմացեք վոր ժամն ե:

Բայց ով, վորտեղից կարող եր իմանալ. վոչ մեկը, բացի Կրուտիկովից ժամացույց չուներ:

— Այ յես ըսենց ու ընենց... Այ թե ժամացույցի զինը վորտեղ ե թանգ... Եստեղ զբանց. — Հայհոյեց Վասկան և նույն ըովելին կարծես նրա սրտում սկսեց կորեկ լցվել: Վասկան լարված վիճակում սառեց-մնաց:

Մշուշը ցըվեց: Վասկայի աչքերի առաջ մաքուր և վողորկ սարահարթ ե: Դենը գյուղն ե, իսկ գյուղում սարսափով իրար են խառնվել սպիտակները: Ավելի հեռուն, աչքը ուր վոր ձգում ե գնդացիրների հեռավոր աղմուկն ե: Շուտով նաձուլվեց մի ուրիշի, իսկ հետո ասես թե համազարկի: Միքտը կարծես թե վեր թռավ և ջարդվեց կրծքի հզոր և արնոտ պատերին խփելով:

— Բուխտա, Բուխտա, — փոխված ձայնով, ուրախացած և վայրի գոռաց Վասկան: — Բուխտա, — պարավող:

Յեվ Վասկա կոժուխինը դողդողաց ու ուշագնաց ընկավ գնդացիրի վրա: Նա վոչ լալիս եր, վոչ ասես ծիծաղում:

Բուխտան իսկապես վոր հարավից առաջ խաղալով, կարեց սպիտակների փախստյան բոլոր ճանապարհները՝ Նրա աջ թեր արդեն Յերկաթե դիվիզիայի հետ անմիջական կապ հաստատեց: Նա մի վաշտով դրավեց յերեք գյուղ և վոչնչացրեց մոտ մի գունդ սպիտակներ: Հարկավոր եր հաղթահարել վերջին արգելքը, — գլուխ բերել Պըուղնիկա գյուղի սպիտակների պաշարումը: Հաշիվը ճիշտ դուրս յեկավ: Արահետը վորպես նահանջի և բուխտայի վաշտի մի թեին կամ թիկունքին հարվածելու միակ ճանապարհ՝ ապահովված եր կարճ ժամանակով ուղարկված զորամասով: Հրաձգության հարմարությունը, վորը չեր թույլ տալիս հակառակորդին ուժերի քանակն իմանալ՝ հնարավորություն եր տալիս վաշտին անհրաժեշտ ժամանակ դիմանալ: Բուխտան համարձակ եր գործում: Նա անսպասելի կերպով յերեւմ եր թշնամու դեմ այնտեղ՝ ուր նրան յերբեք չեյին սպասում: Հարվածն ուղղելով հակառակորդի թույլ և զգայուն տեղերը, Բուխտան արագ դիմում եր դեպի հաղթանակը: Նա արդեն հարավից իջնում եր գյուղի վրա: Անտառի կողմից միաժամանակ սկսած զործողությունները, առաջ ուղարկած հեծյալ հետախույզ խմբի կործանումը, իսկ հետո նաև հետևակ խմբի

վոչնչացումը միանգամայն խառնեցին սպիտակ-
ների հաշիվները, Գյուղում խուճապ և անվճռակա-
նություն եր տիրում։ Բայց և այնպես մի զորասյուն
մի դասակի ուժով, բաժանվեց և ուղղվեց դեպի
անտառը։ Շուտով նա կարգավորեց իր ուժերը,
մարտական գործողությունների համար։

Յերբ Վասկան գլուխը գնդացիրից բաժանեց
նրա աչքերում սկսեցին թոչկոտել մժեղներ։ Նա
ճգնեց շուրջը նայել՝ բայց մշուշը աչքերին ավելի
թանձրացավ, իսկ ձեռները կարծես գնդացիրի
վրա եյին բուսել, արյունից փակչել եյին, ասես
կլեյվել։

— Գրողը տանի, — հայհոյեց Վասկան և աչքը
ձգեց կտրվածքին։

Նորից ճարճատեց գնդացիրը, իսկ նրա հետեւից
Վասկայի զորամասի համազարկը։ Սպիտակների
շարքերը սրբված են։ Նրանց շարժման մեջ շփո-
թություն ընկավ։ Մի քանի խմբակներ պառկե-
ցին սարահարթին, բայց նա հավասար եր ինչ-
պես սեղան և միայն մի փոքր անտառի կողմից
զառեվայր եր։ Գնդացիրը լավ եր հնձում, թեպետ
և չարաճճի հատիկը Վասկայի աչքին թոչկոտում
եր աղջկա նման։

— Մի ժապավենը հավանաբար մոռացանք, —
ասաց Ստեփանը, նետելով տուփը Վասկայի մոտ։
Վասկան աչքերը հարցական չոեց։

— Դու վիրավորված ես... Այս գրողը տանիս
վիրակապ ել չկա, ես ինչքան արյուն ե
գնացել:

Ցեվ մի ակնթարթում Ստեփանը իր շապիկը
պատռեց, սկսեց Վասկայի կուրծքը կապել:
Վասկան չեր դիմադրում բայց ձեռքը գնդացիրից
չեր հեռացնում և միայն հայհոյում եր ժապա-
վենի համար:

— Գրողը տանի... մտածեցին... թե ինչի
մասին...

Ստեփանի կուրծքն ամուր ձգեց, իսկ Վասկան
հրաման տվեց.

— Մատվեյ, քեզ տեսնեմ, հը... Տղերք...
Բուխտան ենտեղ գեղումն ե արդեն:

Իսկ ինքը նորից խոնարհվեց գնդացիրին և
անցքը փնտռեց: Մի վայրկյան վոչ նա այն ե կո-
րավ, վոչ այն ե աչքով ընկղմվեց մշուշի մեջ:
Վասկան տաղնապած ձեռքերով խարխափում եր:
Հանկարծ... Մի քանի գնդացիրներ դյուղից դուրս
վոչ հեռու իրար ձուլեցին իրենց հատու կափկա-
փոցը: Վասկային թվաց վոր իրեն հասավ Բուխտայի
կանչը. «Առաջ, հարձակվել»: Նա աչքը ձգեց սա-
րահարթին: Անտառից վոչ հեռու սպիտակներ
կային:

«Մաքսիմ, մատաղ, քեզ տեսնեմ», և Վասկան
նոր ժապավեն մոցնելով՝ մեքենան բանի դցեց:

Համաչափ խփում եր գնդացիրը, սպիտակների
շարքերը՝ նոսրանում եյին: Վասկան տեսավ թե
ինչպես խմբակները հետ դարձան դեպի գյուղը,
հետո տեսավ, թե ինչպես Բուխտայի կարմիր
բանակայինները գյուղը զրավեցին: Լսեց թե
ինչպես ուռան խառնվեց գնդացիրի կափկափոցին:
Իսկ հետո... Նորից մշուշ և այդ վարդագույն
մշուշում, Վասկան շոգեմեքենա տեսավ: Ահա
մթնավուն ծուխը: Վասկան թուավ թմրին. նրա
վոտները ասես զսպանակներ լինելին: Նա գծե-
րին մոտիկ կանգնեց և ձեռքը բարձրացրեց:
Նրա փոքրիկ ուսերը ցնցվում եյին, շունչը տաք
ե, իսկ սիրտը ավելի արագ ե խփում, կարծես
ուզում ե շոգեմեքենայի չափով գործել, բայց...
Այդ ի՞նչ ե: Ընդամենը քսան քայլի վրա շոգե-
մեքենան հատու դանդաղացրեց իր ընթացքը և
կանգ առավ Վասկայի առաջ քարացածի պես:
Առաջ վազեցին ծանրաբարձ վագոնները, ցնցելով
նրա պողպատյա զորությունը և գոգոցով յետ
շարտվեցին: Վասկայի բերանը բաց մնաց, իսկ մե-
քենավարը շոգեմեքենայից ցած թռչելով, բարձրա-
ցրեց նրան ձեռքերի վրա և անհանգիստ հարցրեց.

— Կարմիր աղդանշան, կարող եր խորտակում
առաջ գալ!

Վասկան ցնցվեց և տեսավ վոր ինքը ամբող-
ջովին կարմիր ե: Հետո տեսավ, վոր Բուխտան

խոնհարվեց իր վրա և համբուրեց նրա ըորբոք~
ված յերեսը:

VII

Կարծես տաք կոփվ չեր յեղել: Խոհանոցներն
ելի ծխում եյին: Ճաշը, վորը պատրաստված եր
սպիտակների կողմից, յեփվում եր Բուխտայի
վաշտի կարմիր հերոսների համար: Մսուրների
մոտ կանգնել եյին ձիերը և ծուլորեն խոտ եյին
վորոճում, վախենալով դլուխները տոպրակներից
դուրս բերել: Ճանձերն ու բուերը այդ որը շատ
եյին, իսկ արևը շռայլորեն բոցավառվում եր,
կարծես կամենալով լիակատար կերպով հազեց-
նել հոգնած կարմիրբանակայիններին վորոնք հենց
այդտեղ, ծառերի կարճ ստվերների տակ հանգըս-
տանում եյին:

— Շաղգամ, — հնչուն գոռաց հանաքչի և լավ
կովող Սվախինը, — Շաղգամ, քաշ տուր եստեղ,
գարմոշկան մի ենալիս ածի, վոր քեֆներս բացվի:

Շաղգամը խոհանոցումն եր քաշ գալիս: Դա
նրա հանգստյան ամենասիրած տեղն եր: Նա մի
ինչ-վոր տարորինակ մոլությամբ ուտում եր
բոլոր շաղգամներն ու կաղամբը: Դրա համար ել
նրան կանչում եյին Շաղգամ: Յերբ Սվախինի
ձենը լսեց, նա նայեց նրա վրա և ծորացրեց.

— Համբերի:

Այսոր Շաղգամի բախտը չբանեց, Կաղամբը
արդեն զցած եր կերակուրի մեջ, իսկ շաղգամ-
ները ով գիտի վոր ծակն եյին կոխել, կամ մի
ուռցե ուղղակի կերել եյին, վորովհետեւ ամենքն
ել քաղցած եյին:

— Շաղգամ, ձեռ քաշի. սպիտակները շաղ-
գամները կերան, մենք ավելի լավ կլինի բորշչի
վրա հարձակվենք:

Կարմիրբանակայինները ծիծաղեցին, իսկ Շաղ-
գամը, հայտնի չի թե ում մորը հայհոյելով՝
հնազանդ կերպով քաշ տվեց զարմոշկանո Նրա
միակ աչքը անթարթ կերպով նայում եյին դեմք,
կարծես հույս ունենալով մի ընկած շաղգամ
նկատել, իսկ վոտները նա ծուլորեն փռեց դեպի
կարմիրբանակայինների խումբը:

— Ե՞ն, չե խոմ չե, — բարձրաձայն ասում ե
Շաղգամը և միանգամից հինգ մասներով խփում
ե ստեղներին:

Փարմոշկայի ձայնը տարածվում և շրջակայ-
քում:

Անթարթ աչքը դետնին ինչ-վոր փնտրում ե,
մատները կարծես կատաղած վոստոստում են
սաեղներին, իսկ խոչափողը ձայնի լարումից
դուրս ցցվում և սկսում ուղիղ կզակի տակ թռչ-
կոտել: Շաղգամը վատ չեր յերգում, յերգում եր
վարակիչ կերպով: Շուտով տասնյակ ձայներ

հյուսվեցին գարմոշկայի հուժկու և զիժ հեղեղին ու
այդ բոլորին միացավ Սվատինի աշխուժ պարը:

Ամեն կողմից կարմիրբանակայինները գարմոշ-
կայի չարաճճի յեղանակից գրավվելով, սկսեցին
հավաքվել: Յեկան Ստեփանը և Մատվեյը, Շաղ-
գամը սկսեց նվազել «Աղջիկ-պարոնը»: Կալերում
սպիտակ և կարմիր թաշկինսակներ, գունավոր
զգեստներ շարժվեցին. տղերքը և գարմոշկան զրա-
վում եյին աղջկերանցը, վոնցվոր խորովածը
կատվին: Կես ժամից հետո արդեն պարին հյուս-
վեցին նաև գունավոր շրջազգեստներ: Զվարթ
աղմուկը բոլորի սիրտը բացեց: Այդ աղմուկում
կարմիրբանակայինները իրենց ամենալավ հան-
դիստն եյին դանում:

Յերբ Մատվեյն ու Ստեփանը յեկան, Նրանց
վրա վասկայի, կրուտիկովի և Խվանյուկի մասին
հարցեր թափվեցին: Ստեփանին սկսեցին կծու
կերպով ծաղրել:

— Եղ վճնց գերի ընկար: Յերեկի հենց խկույն
ձեռքերդ բարձրացրել ես, հա-հա-հա:

Ստեփանը չեր վիրավորվում: Յերբ գարմոնիստը
լոեց, նա Մատվեյի հետ ամբողջ ճշմարտությունը
կրուտիկովի և Խվանյուկի մասին պատմեց:

— Դե, կրուտիկովն ու Խվանյուկը... Նրանց
բանը բուրդ եւ: Բուխտան նրանց ձեռքից բաց
չի թողնի: Մենք եւ չենք թողնի:

Այդ բոպելին փողհարը շեփորից հավաքման
աղղանշան Բոլորը սպասում ելին ճաշի աղղա-
նշանին, իսկ արի տես... Զլինի նորից յելույթ ե-
լինելու կարմիրքանակայինների դեմքին տարա-
կուսանքու հարցում կար իսկույն լուռվյուն
տիրեց Շաղգամը առաջին անգամ աջքը թար-
թեց և զարմոշկան ուսից վար բերեց Դրա փո-
խարեն հրացանը՝ գցեց ուսերին և վերջին անգամ
աչքը ման ածեց իր շուրջը Բայց այս անգամ
ել անհուսալի յեր Շաղգամ չկար Վաշտը հավաք-
վեց գյուղից դուրս սարահարթին Հենց եղտեղ բե-
րին նաև յերեքհարյուր սպիտակ գերիներին:
Բուխտայի ոգնական Վարոնովը հրաման եր
տալիս

— Շար-վել, հավ-սար:

Վաշտը չորս-չորս շարվեց, դեմն ել ութական
գերիները շարվեցին Ավելի հեռու ձիյերի վրա
պահակներն են մեջտեղը դատարկ եւ Գյուղից
դուրս ե զայխ Բուխտան, Նրա հետեւից ել չորս սա-
նիտարներ բերում են պատգարակ Նրանց հետեւից
յերկու պահակներ հրացանները պատրաստ պա-
հած բերում եյին կրուտիկովին և իվանյուկին:
Նրանց դեմքը տափակ եր, անկենդան, իսկ շար-
ժումները անկամ և թույլ իրենց սեփական
հանցագործության ծանրությունն, ինչպես մի
անտեսանելի և ծանր բեռ ճնշում եր նրանց:

Այդ ծանրությունից նրանք կքվել եյին, ձգել
եյին վզերն ու ուսերը և անմիտ կերպով նայում
եյին վոտքերին: Բուխտան դնում եր պատղա-
րակի կողքով: Հոնքերը յեկել եյին աչքերի վրա:
Դեմքն ինչպես բրոնզեղեն մի ձուլվածք՝ սառել
եր մի ծանր վճռականությամբ: Իսկ աչքերը չա-
փում եյին այն տարածությունը, վորը բաժա-
նում եր նրան հավաքույթից: Յերբ Վարոնովը
նրան նկատեց՝ հրաման տվեց.

— Հանդարտ.

Բուխտան կարճ և հնչուն նետեց.

— Բարեկ, արծիվներ:

Միահամուռ պատասխանը ցնցեց շրջակայքը և
արձագանքեց հեռու անտառից: Բուխտան նշան
տվեց, նասիլկան վար դրին: Բոլորը ճանաչեցին
վասկային: Նա անշարժ պառկած եր: Գունա-
տությունը ծածկել եր նրա դեմքը և շրթունք-
ները տենդային կրակով այրվում եյին: Յերբ վոր
վողջունսերը թնդացրին ողը, վասկան բացեց
աչքերը. նա տեսավ Բուխտայի դեմքը, վոր կար-
ծես գորշավուն պողպատի դույն եր առել և աչ-
քերը կարծես գնդակներ եյին շաղ տալիս: Վաս-
կան ժպտաց և իջեցրեց կոպերը: Մյուս ակն-
թարթում նա արդեն տեսավ իր թռչող շոգեմե-
քենան... Ինչպես յերազի միջից նա լսեց նրա
յերկաթե ծանր մղիչների դղրդոցը:

— Ահա ձեր առջեւ... Յերկուսը... Նրանք վատ-
թար են մյուսներից... Սպիտակներից... Յեթե
այսոր նրանք սպիտակ են, կարող են դեռ վաղը
դառնալ կարմիր, քանի վոր նրանք խարված են
գեներալներից, Նրանք վաղը կարող են լինել ձեզ
հետև Վորովհետև ձեր գործը, դա ճնշվածների և
կեղեքվածների գործն ե... Բայց այս յերկուսը...
Նրանք մեղ հետ եյին... Նրանք գնում եյին մեր
դրոշակի տակ իսկ այսոր... Նրանք ցեխում
կոխուեցին այդ դրոշակը... Հավամանը չիրագոր-
ծեցին, Դավաճանեցին ընկերներին, Նրանք մեղ
հետ եյին և հեղափոխության հետ... Բայց նրանք
մեղանից հրաժարվեցին... ամենաամոթ ձևով,
ամենից ավելի դավաճանական ձևով, և... դար-
ձան հեղափոխության թշնամի, Մենք նրանց
հավատում եյինք: Նրանք մեր այդ հավատը
ծաղրի առան և մենք պիտի նրանց դատենք...
Բայց մենք պիտի դատենք և ուրիշին: Ահա տա-
քության մեջ, կրծքից վիրավոր պառկած ե
վասկա կոժուխը... Նա աշխատավոր ժողովրդի
ճշմարիտ զավակն ե...

Շոգեմեքենայի մղիչները թափով եյին աշխա-
տում: Վասկան չեր կարող վորսալ նրանց մե-
տաղե չափը: Միայն առանձին վարկյաններ
դրոշմկեցին նրա հիշողության մեջ և անջնջելի
հետքեր թողին:

— Անշեղ կերպով նա հանդես բերեց հերոսություն և նախաձեռնության... Իր վրա վերցրեց հանձնարարված գործի պատասխանատվությունը։ Արյունահոս վիճակում նստած գնդացիրի մոտ... Յես նրա գտա այնտեղ ուշքը կորցրած... Յես ուժով պոկեցի նրա ձեռքերը գնդացիրից։ Նրանք կարծես թե ձուլվել եյին գնդացիրային թաթին։ Ինչպես պիտի հեղափոխությունը դատի նրան... Հեղափոխության անունից յես տալիս եմ նույն այդ հեղափոխության խորհրդանիշը, — Կարմիր Դրոշի շքանշանը։

Վասկան բացեց աչքերը։ Մի ակնթարթ յերեվաց Բուխտայի դեմքը ձեռքին կարմիր Դրոշի շքանշան, — ինչպես Լենինի նրան տված յերկու շքանշանները... Հետո նա շքանշանը զգաց իր կրծքին։ Յեզ զգաց ինչ-վոր մեկի շրթունքների հալումը, իր բորբոքված այտերին, Վասկան ել վոչինչ չի հիշում, վորովհետև մշուշը լույսը սքողեց։ — Բայց և այնպես շողեմեքենայի մղիշները բանում եյին։

— Իսկ այս յերկսին... դատեցեք...

Մի ակնթարթ ողում սպառնալից մի լոռություն կախվեց։ Բայց միայն մի ակնթարթ, և հետո մի քանի հարյուր ձայների հուժկու աղաղակով ընդհատվեց։

— Մ ան

Մի ըռպեյում վերակարգավորված վաշտն իր
ճակատով դարձավ դեպի անտառի պուրակը: Յեզ
Վասկայի մեջ դրոշմվեց Բուխտայի շարժումը.
— Վաշտ... Կրակ:

Հետո Վասկան չգիտես թե ինչու կեռասենին
տեսավ... վորպես թե նա Մալանիայի վարսա-
փնջերն ե վոլորում: Իսկ նա այնպես վարթամ,
այնպես այրող ե, և թվում ե վոր նրանից ազա-
տության, դաշտերի և զեփյուռի բուրմունք ե
տարածվում... Վասկան ինքնամոռացության մեջ
ընկավ և... Մալանիայի գլուխն իր կրծքին դրեց:
Իսկ նա,—ախ, ինչ չարաճնին ե,—խաղում ե իր
խոպոպիկների հետ, կարծես թրթուցնել ե ուզում
նրանց վրա: Հանկարծ չգիտես թե ինչու, նորից
շոգեմեքենայի ծանր մղիչները դրզրդում են...


— Ճգնաժամն անցնում ե... Կենդանի յե մնալու:
Վասկան աչքերը բաց ե անում, նրա առաջ
Բուխտայի և վաշտի բժշկի դեմքերն են:

— Մի քիչ ջուր լիներ, — խնդրում ե նա ան-
համարձակ:

Իսկ գյուղից դուրս ծիծաղում և լալիս եր զիժ
գարմոշկան: Շաղգամը վարակիչ և այնպես լավ
յերգում եր: Նրա անթարթ, միակ աչքն այնուա-
մենայնիվ այդ որը յերեկոյան դեմ դտավ մի
շաղգամի կտոր:



ՊԱՀԱՆՁԵՑ
ԽԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎԱՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶԲԻ.
ԴԻՐԵԿԾՈՒՄ ՄԱՍԻՆ
Մոսկվա, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.



ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0043139

12 4ПФ.

2559

Д 723



ТКАЛИЧ-ДНЕПРОВСКИЙ

Закон революции

(Перев. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.